

ԼԵԶՎԻ ԹԻԿՆԱՅԻՆ ՄԱԿԵՐԵՍԻ ԼՈՐՁԱԹԱՂԱՆԹԻ ՊԱՏԿԵՐԻ ԱՆԱՏՈՄՈ-ՏՈՊՈԳՐԱՖԻԿ ԱՌԱՆՁՆԱՐԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՄՈՏԱԿԱ ԵՎ ՅԵՌԱՎՈՐ ՅԵՏՄԱՅՈՒ ՇՐՋԱՆՈՒՄ

Բիշարյան Մ.Ս., Ռոմոդանովսկի Պ. Օ., Բարինով Ե. Ն.

Երևանի Մ. Հերացու անվ. պետ. բժշկական համալսարանի դատական բժշկության ամբիոն, Երևան,
Հայաստան

Անձի նույնականացման համար առաջարկվել է կատարել լեզվի թիկնային մակերեսի լորձաթաղանթի պատկերի ուսումնասիրություն: Ըստ լեզվի լորձաթաղանթի գույնի, ինչպես և պտկիկների տեղակայման, դրանց չափի և ձևի, բացի այդ՝ ծալքավորման տարբերակների, հնարավոր է հայտնաբերել լեզվի թիկնային մակերեսի լորձաթաղանթի փոփոխությունները՝ կապված տարիքային և սեռական պատկերի դինամիկայի հետ: Ներքին օրգանների որոշ հիվանդությունների դեպքում փոփոխվում է լեզվի թիկնային մակերեսի լորձաթաղանթը: Ախտաբանական փոփոխությունները, որոնք զարգանում են ստամոքսում, լյարդում, ենթաստամոքսային գեղձում, որպես կանոն, հանգեցնում է ոչ միայն բերանի խոռոչի լորձաթաղանթի օրգանական և ֆունկցիոնալ խանգարումների, այլև՝ լեզվի:

Տարբեր էթնիկ խմբերն ունեն լեզվի արտաքին տեսքի տարբերություններ և կառուցվածքի անհատական առանձնահատկություններ:

Դատա-բժշկական փորձաքննության պրակտիկայում հաճախ հանդիպում դեպքեր, երբ որպես հետազոտության օբյեկտ են հանդիսանում նեխային փոփոխությունների ենթարկված, անդամահատված դիակները կամ դրանց մասնատված հատվածները:

Մահվանից հետո, տարբեր ժամանակահատվածներում, սկսած առաջին օրից մինչև մեկ ամիս վաղեմությամբ, հետազոտվել են արական և իգական սեռի թվով 290 դիակների լեզուները: Մահից հետո, առաջին երեք օրերի ընթացքում լեզվի լորձաթաղանթն իր ամբողջ մակերեսով փայլուն էր, բաց վարդագույն, լեզվի թիկնային մակերեսի լորձաթաղանթը ծածկված էր տարբեր գույնի փառով, որի ինտենսիվությունն ավելանում է՝ մոտենալով լեզվի արմատին: Մահը վրա հասնելուց յոթ օր հետո, լեզվի լորձաթաղանթն ամբողջությամբ փայլուն է, դիտվում է լորձաթաղանթի գույնի փոփոխություն՝ դժգույն վարդագույնից դեպի կեղտոտ կանաչավուն գույնի, դեղնավուն երանգով: Լեզվի մեջքի մակերեսի ծալքավորումը, լեզվի ձևն ու չափերը պրակտիկորեն չեն փոխվում:

Մահը վրա հասնելուց 10-րդ օրվանից սկսած մինչև երրորդ շաբաթը, լեզվի լորձաթաղանթն ամբողջությամբ գորշա-շագանակագույն էր, աստիճանաբար վերածվելով կեղտոտ շագանակագույնի՝ ունենում է թեթևակի խամրած տեսք: Լեզուն փոքր ինչ չափերով մեծացել էր՝ կապված մկանային փայտացման լիակատար բացակայության և մկանային հյուսվածքում նեխային փոփոխությունների հետ, դարձել էր ավելի տափակած, իսկ եզրերի շրջանում՝ նկատվում էր ժաներիզավորություն:

Մահը վրա հասնելուց հետո՝ սկսած երրորդ շաբաթից մինչև մեկ ամիս վաղեմությամբ, լեզվի գույնը փոխվում է ամբողջությամբ՝ կեղտոտ շագանակա-կանաչավուն գույնից մինչև կեղտոտ մուգ շագանակագույնի: Մահվանից հետո, այս նշված ժամանակահատվածում, միայն խրամատապատ պտկիկներն մնացել էին առանց խիստ արտահայտված նեխային փոփոխությունների: Առանց մեծ դժվարության, հնարավոր էր երկու կողմից որոշել դրանց քանակը, նկատելի էր դառնում պտկիկը շրջապատող գլանիկի հարթումը: Մահվանից երկու ամիս անց, նկատվում է լեզվի նեխային փոփոխությունների խիստ ինտենսիվացում, կառուցվածքային տարբերը տարբերակել հնարավոր չէ:

Այս տվյալները կարող են օգտագործվել անհայտ անձանց դիակների դատա-բժշկական նույնականացման համար, մահվանից հետո, մինչև մեկ ամիս ժամկետում: